«ԹԵՐԹ ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, 0054, Չարենցի 1
+374 (60) 528 528 @ editor@tert.am

"Tert am" Ltd.
RA, Yerevan, 0054, Charents 1
+374 (60) 528 528 @ editor@tert.am

*ՀՀ Վայոց Ձորի մարզպետ*

*Արարատ Գրիգորյանին*

# Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. *Թափառական քանի՞ շուն կա մարզում:*
2. *Մարզում թափառական շների համար հատուկ նախատեսված քանի՞ վայր, կենտրոն կա կամ, առհասարակ, նման վայրեր կա՞ն:*
3. *2018-2020 թթ. ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել թափառական շների վնասազերծման կամ գլխաքանակի աճը վերահսկելու նպատակով:*
4. *Ի՞նչ մեթոդներով է իրականացվել և իրականացվում շների վնասազերծումը կամ գլխաքանակի աճի վերահսկումը (ստերջացում, ոչնչացում, պատվաստում):*
5. *Քանի՞ շուն է ստերջացվել 2018, 2019, 2020 թթ.–ին: Խնդրում ենք ներկայացնել յուրաքանչյուր տարվա տվյալները առանձին:*
6. *Քանի՞ շուն է ոչնչացվել 2018, 2019, 2020 թթ.–ին: Խնդրում ենք ներկայացնել յուրաքանչյուր տարվա տվյալները առանձին:*

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն

Tert.am կայքի լրագրող Արփինե Հախվերդյան

Հեռ.՝ 093410221,

էլ.փոստ՝ arpinehakhverdyan94@gmail.com

11.06.2020 թ.

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 4330
16. 06 2020